

ՍՊԻՏԱԿ ՋԱՐԴԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1915 ԹՎԻՆ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՏԵՐ-ԷԼ-ԶՈՐ – ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

9(56)
Ա-83
h2

ՍՊԻՏԱԿ ՋԱՐԴԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1915 ԹՎԻՆ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՏԵՐ-ԷԼ-ԶՈՐ – ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տպագրության պատրաստեց
Վարուժան Պողոսյանը

6925

Երևան
Լուսակն
2025

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 832

Սպիտակ ջարդը Թուրքիայի հայկական
կոտորածները Ս 832 1915 թվին Սեբաստիայի շրջանում և
մինչև Տեր-Էլ-Զոր – տեղահանությունը /
Կազմող Վ. Պողոսյան.- Եր.: Լուսակն, 2025.- 32 էջ:

Տպագրվող այս փաստաթուղթը, որը նվիրված է 1915 թ. տեղի ունեցած հայկական կոտորածներին թե՛ մասնավորապես Սեբաստիայից մինչև Տեր-Էլ-Զոր և թե՛ այլ տարածքներում, գրել է ականատեսներից մեկը: Նա այդ ժամանակաշրջանում եղել է փոքրահասակ, ազգությամբ հայ, ով տեսել է թե ի՞նչ է կատարվում թուրքերի կողմից կազմակերպված հայկական կոտորածների ժամանակ: Հետագայում նա գրել է այն, ինչ տեսել է: Ցավոք նրա անունը և ազգանունն այս փաստաթղթում փաստորեն չկա (վերջում հարցականի տակ նշված է Սուրեն Ստեփանյան): Այս ձեռագիր փաստաթուղթը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Պարսամյանի (1909-1990) անձնական արխիվում է, որը գտնվում է Հայաստանի ազգային արխիվում (ֆ. 240, ց. 1, գործ 391):

ISBN 978-9939-979-50-2

© Լուսակն, 2025
© Վարուժան Պողոսյան, 2025

6925

Սպիտակ ջարդը
Թուրքիայի հայկական կոտորածները 1915 թվին Սեբաստիայի շրջանում և մինչև Տեր-Էլ-Զոր – տեղահանությունը

Իմ նպատակը միայն նկարագրելն է այն ահավոր և անմարդկային ջարդերին, որոնք տեղի ունեցան Տաճկաստանի բոլոր կողմերը I իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Իմ նպատակն է միայն նկարագրել զոր իրականությունը, դեպքերը, տեղերը, առանց քաղաքական գույն տալու իմ պատմվածքին: Ես չեմ կարող ասել, թե թուրքերը արդյոք իրավացի՞ էին հայերը բնաջնջելու մեջ թե ոչ: Ես չեմ անդրադառնում ազգային քաղաքական հարցին, այդ բանը թողնում եմ պատմաբաններին: Ես չեմ ասում, որ ազգային և կրոնական գետնի վրա ջարդեր չեն եղել նույնիսկ զարգացած կապիտալիստական երկրներում, հին դարերի և մոտավոր անցյալի ընթացքում: Բայց այդ բոլորը ես կարծում եմ կնսեմանան 1915 թվի թուրքական կառավարության գործադրած ջարդերի հետ համեմատելիս: Թուրքերը ջարդելու երկու մեթոդներ ունեին, մինը վերցրած Վիլհելմյան Գերմանիայից, մյուսը հին Լենկդեմուրյան և Չենկիս խաների և Ադդիլաների մեթոդից: Ջարդել թշնամու զինված ուժերը, կամ ժողովուրդը արդարացի է, բայց ջարդել երեխաներին, ծերերին, հղի կանանց միայն հատուկ է գերմանական բարբարոս ցեղերին, և արևելյան մոնղոլական հորդաներին: Առաջինների առաջնորդը Վիլհելմյան Գերմանիայի զինվորականները, իսկ մոնղոլական ջարդարարների հետնորդները թուրքերը, սուլթանները և իթթիհատական չիվաղները

Էնվեր, Թալլաաթ, և մյուսները: Ջարդելու և սպանելու մեթոդներ կան, որոնք գործադրվում են թշնամին ոչնչացնելու համար. դրանք են զենքը, սուրը, կախելը և ելեկտրական աթոռը: Բայց այն մեթոդները, որս թուրքերը կիրառեցին անմարդկային էին և բարբարոսների գործեր հանդեպ ծերերի, երեխաների, կանանց և աղջիկների, նույնիսկ նոր ծնված և բոլորովին լույս աշխարհ չտեսած երեխաներ քաշել մօրը արգանդից դուրս և նրանով հրեշային խրախչանքներ սարքել, այդպիսի սրիկայություններով քաղաքական նպատակներ հետապնդել. մարդկանց օրերով, ամիսներով անտանելի չարչարանքների ենթարկել, մարմնական մասնահատումներ կատարել, աչքերը փորել, փայտով, մատներով, երեխաների ոտերից բռնած երկուսի բաժանել ողջ ողջ, 6-9 տարեկան երեխաներին պղծել թուրք բարբարոսների վայել բաներ են, չարդարանալու միջոց չունեն: Ես համարյա տեսել և զգացել եմ ջարդերը իմ մարդի վրա, զգացել եմ ավելի շատ, քան որևիցե մեկը, որ կա ողջ մնացած այդ սարսափելի ջարդերից: Մեր տնից, որը բաղկացած էր 32 հոգուց, միայն ես ողջ մնացի և ամեն մեկը մի տարբեր տեսակ մահով սպանվեցին, ձորերում, ջրերի մեջ, սրով, փայտով, զենքով, սովից: Մի մասը առեվանգվեց, բռնաբարվեցին փոքրահասակները նույնիսկ վայրենի գազանաբարո թուրք ժանդարմների և ժողովրդի կողմից: Իմ ազգականները, ծնողները, իրենց մահը գտան մոտ 1000 կիլոմետր երկարությամբ ճանապարհի վրա, Սեբաստիայից մինչև Տեր-էլ-Զոր, Սիրիայի կիզիչ անապատները: Տալիս եմ միայն այն չնչին, դեպքերը ի լուր աշխարհի, որոնք կատարվեցին խուլ անդնդախոր ձորերի մեջ հեռու մարդկային տեսողությունից, գի-

շեր ժամանակ, որոնց լուռ վկան եղել է փայլող սառը լուսինը երկնքում, կամ լեռների ապառաժները երկրի վրա: Եվ ես ազատվել եմ այդ սպանդից դիպվածով, ինձ նման հազարները սրախոխող, փայտերի, քարերի հարվածների տակ սոից, ծարավից, ոչնչացան: Ես երևի ողջ մնացի, որ պատմեմ նրանց քստմնալի մահը, պատմեմ մարդկանց ժողովուրդներին, գալիք սերունդներին, բայց առաջ ոչ ոք չլսեց մեր ցավերը և ծով տառապանքները, մեզ լքեցին և ծաղրեցին: 1914 թվին մի սարսափելի երազ տեսա թեև ես սնապաշտության չեմ հավատում, սակայն իմ մանկական կյանքում տեսած այդ երազը, ես մինչև այսօր չեմ մոռացել և հիշում եմ շատ պարզ և հստակ: Մեկ էլ արևի խավարումը իմ վրա խորը թախիծ է թողել 1914 թվի օգոստոսի 14-ի օրը: Իմ մանուկ հոգին զգում էր գալիք սարսափելի աղետները կարծես և ես միշտ իմ փոքր եղբորը փարվում էի ու սիրում նրան և չեյի ուզում հեռանալ նրանից, այդ երազից հետո միշտ խղճում էի նրան: Եվ գաղթի ժամանակ ողջ ողջ թողուցինք ճանապարհին մի անծանոթ վայրում հիվանդ ոտերը որ թնոտած է և թարախակալած, լաց եղավ մեր ետևից եկավ մեր ոտերը ինկավ «ես կվախնամ, սոված եմ, ինձ մի թողու և ես կմեռնեմ» ասաց ու լալով հետ գնաց, որտեղ որ մենք իջևանել էինք նախորդ գիշերը իմ աչքերը ցավում էին ոչինչ չեյի տեսնում, բայց մի անգամ զոռով բաց արի տեսա փոքրիկ հյուծած կմախկացած եղբօրս, սիրտս մղկտում էր, բայց ոչինչ չեյի կարող անել, ոչ հաց կար, ոչ ջուր, ոչ մայր, ոչ մեծահասակ գուրգուրացող մեր վրա, մահը պտտվում էր մեր բոլորի շուրջը: Եվ ես 32 տարիներ խղճից հալածված թափառում եմ. միշտ հիշում եմ իմ երազը, Արևի խավարումը, և

հուսակտոր և ողբերգական փոքրիկ անմեղ եղբօրս վիճակը աքսորի դաժան ճանապարհին, դժոխք Սուրուճ քաղաքը Միջագետքում: 1914 թվի վերջերը հսկայական բանակներ սկսան շարժվել հետիոտն Սեբաստիայից դեպի Էրզրում և որովհետև մեր գյուղը գլխավոր ճանապարհի վրա էր համարյա ամեն օր ականատես կլինեյինք հիվանդ, հոգնած, գունաթափ, դոլուկ մարդկանց, որոնք հայտնի էր, որ օրերով ճամբա էին եկել ոտով կոնակնին հսկայական բեռներով ետ մնացողներին խփում սպանում էին տեղն ու տեղը հենց մեր աչքի առաջ գյուղի ծայրին լինեյին նրանք թուրք կամ հայ:

1915 թվի սկզբներին սկսան հայ գյուղերից բռնի վերցնել լծկան եզներ, ձիեր, գրավում և մարդկերանց հետ տանում էին բանակի պետքերի փոխադրումների համար: Այսպեսով մեր գյուղից վերցրեցին ծերերին և անչափահաս 15-18 տարեկան տղաներին և գյուղը համարյա դատարկվեց այդ մարդուց: Քիչ հետո պատահական զինվորներ հարձակվում էին գյուղի տների վրա, քնելու տեղ և ուտելիք պահանջում, սեռային կրքերի համար հարձակվում էին կնանոց վրա բռնի բռնաբարում էին հարս աղջիկ գիշերները: 1915 թվի հունվարին բերին ռուս գերիներ հիվանդ, վիրավոր, ծեծում էին անխնա ցուրտ սառնամանիքին նրանց շորերը հանում և խլում էին նրանց վրայից, թողնելով մերկս ընդդիմանալու դեպքում մի լավ ծեծում, սպանում և մի ջրի մեջ էին գցում: Մեր գյուղում այդ գերիներից մոտ 100 հոգի մեռան տիֆից, ծեծից, ցրտից և սովից: Նրանց մեջ կային և քիչ թվով հայեր – մեր գյուղում թաղվեցին մոտ 1000 հոգի: Շատեր օրերով անթաղ էին մնում գյուղի շները նրանց դիակները ուտում էին թուրք ժանդարմները չէին ուզում, որ նրանց

դիակները թաղեին հայերը նախանձվում էին դրա համար: Մի հունվարի ցուրտ սառնամանիք օր մի ռուս գերու շորերը հանեցին և գցեցին դուրս մեր բոլորի ներկայությամբ: Մարդը աստիճանաբար ցրտի տակ մեռավ, իսկ թուրք ժանդարմները և զինվորները զվարճանում էին ներսից դիտելով: Մեկը, որ դժվրավ էր քայլում հենց գենքի հաստոցի կողմովը խփեց գլխին և սայլի վրայից ցած գցեց թուրք ոստիկանը: Խեղճ մարդը ամբողջ ժամերով ցեխի մեջ չարչարվում էր տապլտկում էր չէին թողնում, որ մարդ գնա նրա մոտ օգնի, կամ հաց տա: Մյուս առավոտ դիակը սառած դեռ մնում էր խորը փոսի ցեխի մեջ այլակերպ փռված: Մեր գյուղացի մի կին Հռուռս Կոտոլյանը հաց էր տվել մի գերու, թուրք ոստիկանները տեսնելով այս բանը կատաղում են և այս խեղճ կնոջը կապում են ռուս գերու հետ և տանում են դաշտը թողնում սառնամանիքին մինչև լուս, առավոտը բերում տեսնում են, որ չեն մեռեր, երկուսին էլ լավացնում և սկսում են գազանաբար սեռային գործտանները տաղել շիկացած երկաթով: Նրանց մարմնի վրա խաչ են դաղում, վառում նրանց աչքերը ողջ ողջ մինչև որ մահանում են սարսափելի ցավերից: «Ահա՛, ձեր ռուս քեռի սիրելը» ասում են թուրք ժանդարմները: Գյուղի կնանոցը կանչել են տալիս որպեսզի ցույց տան նրանց և ահաբեկեն, որ այլևս ռուս գերիներին հացով չօգնեն: Թուրքերը սկսան ավելի կատաղի դառնալ 1915 թվի գարնան երբ Էնվեր փաշան պարտված վերադարձավ Կարսի ճակատից, իր պարտության մեղքը գցեց հայերի վրա և իր գերման տերերից դիրեկտիվներ ստանալով հրահանքեց բոլոր իր կուսակալներին կատարեն իր հրամանները «հայերին ջարդել ինչ կերպով, ինչ գնով էլ ուզում է լինի»:

Եվ սկսան ավելի կատաղի և անմարդկային բարբարոսական ջարդերը սրով, թրով, ջրով, քարով, փայտով, երկաթի կտորով, կրակով ջրով են կանանց, ծերերի, երեխաների, անզտնելի, հիվանդների բոլորին բոլորին անխտիր, որը որ հայ էր, հայ անունը կրում էր իր վրա, որոշվել էր, ոչնչացնել երկրի երեսից, քաղաքական ինչ ինչ նպատակներով: Սկսան զրպարտություններ չնչին բաներով, խուզարկում էին գյուղի տները, փախստականներ կամ զենք փնտռելու պատրվակով, ծեծում էին կանանց, թալանում էին ինչ որ ձեռքները անցնում էր: Հետո երեխաներից մինչև 70ամյա ծերերին բռնի քշում էին ճանապարհ շինել տալու համար ցուրտ սառնամանիքներին, անասունները մորթում կամ քշում տանում էին գյուղից, գիշերը տները խուզարկելու ժամանակ աչքի ընկնող հարս աղջիկ բռնի հետները վերցնում տանում էին իրենց բնակած տները և բռնաբարում էին մինչև լուս մեկի վրա 7-10 ոստիկան իր սեռային կիրքը հագեցնում էր: Այսպեսով խեղճ հարսը կամ աղջիկը մահանում էր կամ ամոթիցը այլևս չէր վերադառնում տուն գնում իրան գետն էր գցում. տեղ տեղ սկսան սպանություններ արդեն, գյուղից մի քիչ հեռու գտնվեցին երիտասարդ մարդկանց խոշտանգված դիակներ, այդ մասին բողոքի գնացին գյուղի հասակավոր կնանիք շրջանի կենտրոն Գոչ-Հիսար գյուղաքաղաքը: Բողոքի գնացող կնանոց բռնել, բռնաբարել էին, մազերը կտրել և ճամփու դրել «ահա ձեզ բողոք, սպասեք, քիչ հետո կտեսնեք ձեր վիճակը» կնանիք ողբ ու կոծով վերադարձան գյուղ:

Անցավ մի քանի օր եկան հրեշ ոստիկանները 60-70 հոգի գյուղը պաշարեցին ղեկավարությամբ հայտնի ավազակ դարսցի Չեթեպաշի Եահիա-ի (Քյուրյուկ Հյուսեինի ընկերը) Պաշտ Պեյուկլի Չավուշ Իսմայիլ և Հարյուրապետ Սալահետտին հրեշային կերպարանքով մարդ էր մեծ փափախ դրած գլխին իմ մանկական հիշողության մեջ դեռ շատ թարմ է այս հրեշի կերպարը, որպես քրօջս հոգի վիճակում բռնաբարողը և մօրս չարչարանքների ենթարկել տվողը: Մի օր հետո եկավ մեր գյուղը Սեբաստիայից (Ալի Բեյ) Միրալոյ-Տիվանա Հարբի նախագահը Սեբաստիայում, գյուղում զազակություն էր անում մի կեմերեկցի Ահմետ Չեվդաղ անունով մի ոստիկան, որը նախորոք պատրաստել էր ցուցակը թե, ինչ պետք էր արվեր, վաղ առավոտ սկսան խուզարկությունները, հավաքեցին գյուղում մնացած հիվանդ կամ որոշ պաշտունով մնացած մարդկերանց, լեցրին մի գոմ, դուռ լուսամուտ փակեցին, մարդկանց ոտերը ձեռները կապած օրերով սոված պահում էին և մի քանի օր հետո սկսան մի անօրինակ աննախնդաց, անլուր անմարդկային ջարդ, ինկվիզիցիա, խժդժությունների ամենավայրագ ձևերը, որին ականատես էի լինում ես ամեն օր իմ մանկական աչքերով, իմ ազգականների և ծանոթ մարդկերանց վրա: Մի քանի օր հետո մի մասին տարան թևերը կապած գյուղից քիչ դուրս սպանեցին գիշերով առանց զենքի, ոստիկանները ի միջի այլոց հրավիրում էին շրջանի թուրք ամբոխին, մասնակցելու իրենց սպանդին և կողոպտելու սպանվածների շորերը, ամբոխը մասնակցում էր բոլոր տեսակի միջոցներով սպանությանը, զենք չունեյին, սուր, բահ, քլունգ, գերանդի, ինչ որ պատահել է վերցրել են սպանության համար: Սպանելու տարածները գոմից դուրս բերին ծնկաչոք նստացրին գյուղի մեջ, մի կին մոտեցավ իր տղուն, որ ուտելիք տա (Յուզաբեր

Ներսեսյան) ոստիկանները վրա պրծան վերցրին ուտելիքը և Մկրտիչի բերանը կեղտ լեցրին և տեղն ու տեղը խեղդվեց, մայրը մղկտում էր, լաց էր լինում, մազերը փետտում, մորը քարշ տվին տարան քցեցին գոմը կիսամեռ վիճակում, ծեծում էին, ծաղր ու ծանակի վերածում, բոլորին նախքան սպանել տանելը: Իրենց հարազատների աչքերի առաջ ամեն տեսակ նախատինք վիրավորող խոսքեր և արարքներ կատարում էին թուրք խուժանը և ոստիկանները: Մյուս օրը, գյուղից դուրս գիշեր ժամանակ սպանվածների ազգականները, փող էին վերցնում և թույլ էին տալիս դիակը բերել գյուղ և թաղել գերեզմանոցում, լացը, կոծը, ողբը անսահման էր և անտանելի, շատերը խելագարվում էին իրենց զավակների համար, մահվան արհավիրքը տարածվել ամեն կողմ, կանայք մղկտում, մազեր էին փետտում, կուրծք էին ծեծում, ոչ մի գութ, մարդկային զգացմունք չկար վայրագ ոստիկանների մոտ, հրում էին, խփում, կանանց երեխաների: Կյուլվարդ Սաֆայանը գնում է իր տղու դիակը բերելու, փող է տալիս տեսնում է դեռ տղան կիսամեռ, վիզը կես կտրված, հոնդյուններ է արձակում, դես դեն թավալ թավալ է գալիս և շատեր նույն վիճակումը քիչ հող թափած վրաները: Իսկ գյուղում մի քիչ աչքի ընկնող մարդկանց և կանանց պահել են իրենց մոտ և գործ են դրվում պատիժների ամենասարսափելին, Ջենգիս խանի, Լենկդեմուրի, Ալփասլանի հրեշային ջարդերը շատ ու շատ կնսեմանային այս ջարդերի հետ եթե համեմատելիս լինենք:

Տանջում, դանակոծում, կանանց, մարդկանց, ջահելներին և ծերերին անխտիր, Կյուրեղ Գրիգորյանը մահացավ կրած չարչարանքներից, Մարքիս Ներսիսյանի մարմինը

կասկապույտ էին արել հարվածների տակ, աքցանով մարմնի մսերը պոկում էին, եղունգները քաշում մեկ մեկ, հետո դրանով էլ չբավականացան մատներով աչքերը հանեցին: Խեղճ մարդու կինը ճվում էր, աղաղակում, ինքն իրան գետիններն էր խփում: Մեր գյուղի տերտերին Սահակ Մազմանյանի ոտերը նալեցին, շիկացած պայտով, մորուքը փետտեցին, շիկացած երկաթով երեսները վառեցին, գլխին շիկացած կասկարմիր թաս դրին, հետո էշու հետևը պոչից կապած գյուղում ման ածեցրին, ցույց էին տալիս ի գիտություն բոլորին, Մարգարյան Սարգիսի ատամները մեկ մեկ քաշեցին, քիթը, ականջները կտրեցին և ստիպեցին որ ուտի իր մարմնի անդամները: Իմ քեռու Տիգրան Կոտոշյանին թեերի տակ խաշած տաք ձու կապեցին, մարմնի վրա խաչ նկարեցին շիկացած երկաթով և ոտիցը կախեցին մինչև լուս գոմի առաստաղից: Մօրս Մայրիամ Սաֆյանին բռնեցին տարին, պառկեցրին ոտերին այնքան խփեցին, մազերից քարշ տվին սանդուխներից ցած, վարտիքի մեջ կատու քցեցին եվ բոլորին ստիպում էին զենքի պաշարների տեղ ասեցին կամ փախստականի տեղ, գյուղում ոչ փախստական կար և ոչ էլ զենք. մենք ութը երեխաներ լաց ու կոծ, գոռում և ճվում էինք մեր մօր համար, մեզ բռնեցին, լեցրին տուն և դռները մեր վրայից փակեցին և մենք չիմացանք, թե նրանից հետո ի՞նչ չարչարանքներ տվին մօրս, ի՞նչ եղավ մայրս այդ գիշեր, այդ մասին պատմում է, այժմ ողջ Ֆրանսիայում Աֆապի Կոտոշյանը (Նորոյանը), որը մօրս հետ բռնված էր, «մօրդ պառկեցրին և արգանդը խրեցին մի մեծ երկաթի կտոր մայրդ գոռում գոչումից աղաչելուց քրտինքների մեջ ուշքը կորցրեց և այլևս չէր զգում, տեսան, որ ձայնը կըտրել է

քաշ տվին գոմը ձիերի սմբակների տակ աղբանոցը գցեցին և վերևից վրան ձեթում էին և հռհռում, դրանից հետո սկսան ինձ չարչարել իմ ուշքը շուտ գնաց և ես այլևս չզգացի, թե ի՞նչ էր կատարվում: Առավոտյան ես ինձ գտա մօրդ կողքին պառկած»: Մյուս օրը Գոչ-Հիսարից մոտ 5-600 մարդ բերին թևերը կապած, որոնք երկար ժամանակ բանտարկված են եղել բանտում և ենթակա զանազան չարչարանքների և զրկանքների, այժմ բերել են մեր գյուղը, որ տանեն սպանեն մի ձորի մեջ գիշերը, որոնց մեջ կային մեր գյուղացիներ, Վարդան Սարգսյանը իր հայրը Պապիկ Սարգսյանը և շատեր:

Գյուղից էլ հավաքեցին ծերեր և մանկահասակ երեխաներ, խառնեցին այդ խմբին, ազգականներից փող հավաքեցին, որ ապահով Սեբաստիա հասցնեն: Կես գիշերին տարին գյուղից քիչ հեռու Կապանի ձորը ասված տեղը, բոլորին սպանեցին առանց սև զենքի ձայն հանելու, սպանում էին կացնով, դանակով, բիրով, քարով և փայտերով, մյուս օրը շատեր դեռ հոգեվարքի մեջ էին կիսաթաղ, կնանիք խմբերով գնացին իրենց մարդիկը ջոկելու կամ ճանաչելու, ես էլ գնացի մի սարսափելի տեսարան ոմանց գլուխները ջարդված, ոմանց աղիքները թափած, ոմանց թեվերը անդամահատված, կիսամեռ, անթաղ հսկայական դիակներ ամբողջ ձորի երկարությամբ: Կային և դեռ շարժվողներ հռնթյուն արձակողներ, լաց, աղաղակ, ճչոց, անեծք, երկինք գետինը պատել էր, իսկ ոստիկանները և նրանց ընկերակցող չեթեները հռհռում և ծիծաղում էին լացող կնանոց վրա, ծեծում, քարկոծում էին և կիսամեռ մարդկանց նորից խփում գլուխները ջարդում էին քարերով, փայտերով և բերելով իրենց հարազատ ծնողների ընտանիքների և երեխաների աչքի առաջ: Ամբողջ օրեր գյուղում մարդկանց չարչարում էին, խրախճանքներ էին սարքում, հարս աղջիկ պղծում, սանձարձակ կերպով, իսկ գիշերները մարդկանց սպանդանոց էին տանում: Ամբողջ այր մարդիկ բանակից վերցրել և բանտարկել են, խումբ խումբ բերում և մեր գյուղի մոտ սպանում էին նրանց շղթայակապ:

Ամեն գիշեր խուլ մեկ երկու հրացանի ձայներ էին գալիս մոտիկ տեղից, առավոտ հայտնի էր դառնում, որ Գոչ--Հիսարից Սեբաստիա կամ Սեբաստիայից Գոչ-Հիսար տանելու պատրվակով շարան, շարան մարդիկ բերում էին թևերը կապված մեր գյուղի մոտ խորը փոսեր կոչված վայրերը և սպանում իրենց սովորական զենքերով, մեթոտներով: Առավոտ գյուղից կնանիք գաղտագողի գնում էին իրենց մարդկանց փնտռելու և ճանաչում էին նրանց և ոստիկանների վրա և չեթեների վրա տեսնում և ճանաչում էին իրենց հարազատների հագուստները: Գդակները և ուրիշ իրեր: Լաց ու կոծ ամեն տուն ամեն օճախ: Գյուղից որևէ մարդ կին թե տղա, որ հեռանում էր սպանում էին անխտիր: Ամեն մի թուրք ոտի էր կանգնել ծառայելու իր Մարգարեյին այն է 40 կետավոր մորթելու և չարչարելու համար: Թուրք ոստիկանները և պաշտօնեաները հարստացրին իրենց հարեմները հայ բռնագրված աղջիկներով և հարսներով: Գյուղը ընդունել էր մեռելային տեսք, շները, կատուները, անասուններն անգամ զգում էին մարդկանց դաժանությունները, և երկրի վրա կատարվող սարսափելի անցքերը: Գեշատիչ թռչունները ճախրում կռնչում էին մեր գյուղի վերև ամբողջ օրը մարդկային դիակներից կշտացած ոստիկան գիշատիչներին փառք էին տալիս: Սարերում մի քարայրի մեջ թաղված

Մարգար և Նազարեթ Մազմանյանները բերին գյուղ մեծ հանդիսավորությամբ հրապարակ սարքեցին, երկաթե սրածայր ցցերի վրա նստացրին մերկ վիճակում ու հետո մահակներով հարվածեցին նրանց կոկորդներից գլխից մինչև որ մահացան անտանելի գալարումների մեջ, հետո նրանց ստանդամները կտրեցին և կնոջը մորը ուղարկեցին ուտելու:

Երեկոյան բռնի հավաքեցին դեռատի առջկերանց դպրոցի սրահը և մինչև լուս խրախճանք սարքեցին: Աղջկերանց մեջ էին Զարուհի, Քնար, Ելման, Սարգսյանները, Քնար Սարգսյանը հղի վիճակումը անտանելի չարչարանքների ենթարկեցին չդիմացավ անտանելի բռնություններին և մահացավ խժդժություններից (իմ քույրն էր), այսպես ամեն առավոտ գալիս մորը կանչում էին «արի աղջիկդ տար»: Խեղճ անչափահաս աղջիկներ հազիվ 12-13 տարեկան մահանում էին: Մեր գյուղացի Ներսեսյան Ղազարին վիզը շղթա գցած առջի նման խաղացնում էին գյուղի մեջ, հարձակվեց մի ոստիկանի վրա գետին փռեց նրան մյուսները վրա պրծան կապեցին ոտն ու ձեռքը և սկսան աքցանով եղունգները քաշել, ականջները կտրեցին, հետույքի մեջ ցից փայտ խրեցին, աչքերը պայթեցրին շիլերով:

Ձիու պոչիցը կապեցին և ձին արագ քշեցին, Ղազարը թավալագլոր ձիու աքացիների տակ քարշ էր գալիս ձիու հետևից, իսկ թուրքերը հռհռում էին այս տեսարանի առաջ: Հաճի, Սարգիս Սարգսյանին իմ հորեղբորը 2-3 ամիս բանտում ամեն տեսակ չարչարանքներ տալուց հետո Գոչ-Հիսարի բանտում, ամբողջ մարմինը սևացած, թևերը կտրած, ոտները նալած, աչքերը հանված այլակերպ բերին գյուղ եզան սայլով և 1000 ոսկի փրկանք ուզեցին նրան իր ծնողին, կնոջը տալու համար, ու հետո տարին գյուղի տակը Խռաջի փոսը ցած բերին սայլից, իրենք նրա տան կանաչների վրա, նվագով, խմիչքներով 6-7 ոստիկաններ և մի խումբ հանդիսատեսներ հետները և սպանելու գործողությունը տևեց ամբողջ օրը: Ես տեսածը չեմ պատմում այլ մեր տան հին բարեկան ժանդարմ Հաֆրզը պատմում է հետևյալը ջարդից հետո մեր գյուղի մարդկերանց:

[«] Հաճի Սարգսին երկու ամիս բանտում ծեծեցինք, շիկացած երկաթով տաղեցինք ամբողջ մարմինը, ճիպոտի, գավազանի հարվածներ էինք տալիս ամեն օր 4-5 անգամ, մարմինը կաս կապույտ արինք աքցանով մսերը և եղունգները ծվեն ծվեն պոկեցինք, ոտերը նալեցինք, աչքերը վառող նյութ ածեցինք, ոտերը նալեցինք շիկացած նալով և մեխերով, գլխին շիկացած թաս դրինք, ականջները կտրեցինք, բերնիցը ոչ մի բառ չասեց, ոչ բողոքի, ոչ էլ իր ընկերների մասին, և ոչ էլ մահացավ: Հետո սայլի վրա դրինք գյուղ բերինք, փողերը սիրահոժար հանձնեց մեզ և մյուս թանկարժեք իրերի տեղը հայտնեց, որ միայն իր կնոջը և երեխաներին խնայենք: Հետո սայլով տարինք գյուղից հեռու, ցած բերինք, իր սիրած 5 տարեկան տղուն սպաննեցինք իր առաջը ոտերը մեկզմեկուց բաժանելով ինքը պառկած տեղը շարժումներ էր անում չեյինք հասկանում թե ի՞նչեր էր ասում, մի լավ սեղան սարքեցինք կանաչի վրա, խմեցինք իր արյունից խառնեցինք օղու մեջ և իր երեխու արյունը իրան խմցրինք բերանը ածելով: Առաջ ատամները քաշեցինք, կես ժամ հետո լեզուն կտրեցինք, ամորձատեցինք այդ կարևոր բանը մոռացել էինք մինչ այդ, հետո քթի մնացած մասը այս-

պես կամաց կամաց շնչասպառ եղավ երբ սև թոքերը դուրս թափեցինք, երեկոյան ժամը ուղիղ 7-ին: Ընդամենը տեվեց 10 ժամ 40 րոպե: Վերադարձանք գյուղ, միտք ունենալով վայելել կինը և աղջիկը մի ամբողջ գիշեր, և ամորձիքները կնօջը կերցնել: Կինը խելագարվեց այս դեպքի վրա և փախավ սարերը նույն օրը: Մինչև այսօր անհայտ է նրա վիճակը [»]:

Նույն օրը սրիկա ոստիկաններ եկան գյուղ նորից իրենց զոհի աղջկա Զարուհին և քրօջս Քնարիկին վերցրին տարան դպրոցի սրահը, գիշերը մինչև լույս խրախճանք էին սարքել, մենք չգիտեյինք ի՞նչ անեյինք, մօրս վրա լացինք թե քրօջս վրա, թե սպանվածների վրա: Մենք էլ սարսափից կուչ եկած լալով մեր աչքերը համարյա կուրացել էր, բայց էլի դես դեն էինք գնում, ծլկում էինք, տեսնելու թե ի՞նչ է կատարվում, մեծերի պատվերովը, հետո գալիս պատմում էինք մեծերին մանրամասն ինչ որ կատարվում էր: Դրա համար էլ ականատես եմ եղել գյուղի նախճիրներին սրտաճմլիկ և ողբերգական տեսարաններին, որը մարդկային պատմությանը արձանագրած չունի մեր դարերում այսպիսի ոճիր, քաղաքական նպատակների համար: Գրիչը դժվար թե կարողանա նկարագրել 1915 թվի ջարդի գոնե 5-10 տոկոսը, խավար գիշերներում անդնդախոր ձորերի մեջ կատարված ոճիրները, Թուրքիայում իրենց նմանը չունեն մարդկային պատմության մեջ ոչ մի երկրում:

Զարուհին և քույրս տեսա մյուս օրը գունատ դեղնած 7-8 աժդահա կիսավայրենի ոստիկաններ հերթով իրենց սեռային կրքին հագուրդ էին տվել, խեղճերը գիշերը մինչև լուս լացեր ու ճվացեր են աղաչել ու պաղատել ոչ մի օգուտ չէր

6925

արել մարդկային կերպարանքով գազանների մոտ: Գյուղի շուրջ ամեն օր տեսնում էի դիակներ, և սպանություններ օր ցերեկով: Մի օր Գոչ-Հիսարից մեր գյուղը եկավ Հաֆըզ էֆենդին, գյուղում մարդ չէր մնացեր, սկսավ հավաքել փոքր երեխաներին գյուղի կենտրոնը, ով որ փող էր բերում և կարմիր ոսկի տղուն ազատ էր թողնում, որպեսզի սարսափեցնի գյուղացի կնանոց մի երկու տղու գլուխը թոցրեց ինքը իր ձեռքով, մի երկուսին էլ սպանել տվավ դանակներով և քարերով: Ով որ փող ուներ տվեց իր երեխուն ազատեց իսկ մնացած երեխաներին, իրար թիվը տալ տվավ և ամեն մի հինգ թե վեց հոգուն մի գնդակ պարպել տվեց և կիսամեռ երեխաները հավերի նման տապլտում էին դես դեն, հունդյաներ հանում մայրերի սրտաճմլիկ աչքերի առաջ, եթե որևէ մայր հանդգներ, լաց կամ ճիչ հաներ տեղն ու տեղը սպանում էին: Կես ժամվա չարչարանքներից հետո մահակավոր չեթերը մտան տղերանց մեջ և փայտի բրի հարվածներով սկսան սպանել բոլորին և ոտիցը քաշելով տանել գյուղի ցածի առուն գցել: Ամեն օր մյուս գյուղերից հրացանի ձայներ էին գալիս, ծուխ էր բարձրանում ջարդի ու թալանի լուրեր էին գալիս, հայերի համար մի գյուղից մյուսը գնալ արգելված էր, լուր տանում բերում էին թուրքերը և ամեն ինչ պատմում էին տներ վառելու սպանելու մասին: Գյուղի մոտ եզ արածացնելիս ամեն օր ականատես էինք լինում սպանությունների մեր գյուղի ինձ հասակակից մի քանի տղաների և աղջիկների հետ: Բայց հիշողությանս մեջ դեռ շատ թարմ է մնում մի դեպք: Չեմ հիշում, ո՞ր ամսին, ո՞ր օրը գաղթից մի քանի օր առաջ մեր գյուղի մոտ, բերին մի ամայի վայրում 2 մարդ և կնանիք, երեխաներ, կառքից դուրս բե-

րին, նստացրին կանանչների վրա, մերկացրին բոլորին անխտիր, հագուստները դրին մի կողմ, մենք պառկած քարերի արանքը, գաղտագողի դիտում էինք այդ տեսարանը 3-4 տղաներով: Ինչ որ մի փոքրիկ իրարանցում տեղի ունեցավ: Այդ երկու մարդին կապեցին միմյանց, երեխաներին սրով գլխները թոցրին շպրտեցին ամեն մի գլուխ մի կողմ, կնանիք մի արտառոց ձայն հանեցին, դեռ մինչև այսօր այդ ձայնը կա իմ ականջի մեջ և չհեռանում ինձանից: Հետո սկսան կնանոց վրա հարձակվել, ձեռները հետին կապեցին շոգ արեվի տակ, պառկեցրին գետնին, քթի բերնի վրա և իրենց սեռային կրքերը հագեցրին ամբողջ 15 հոգի: Մարդիկը ինչ որ դես դեն էին ընկնում ոտերը ձեռները կապված անհնդատ խփում էին նրանց գլխին մահակներով, նրանք բխավում էին, գոռում էին, ո՞վ էր տերը այսպես ժամերով երկու կնօջ դիակները փռված մնացին մերկ անշարժ, երկու հրազեն պարպեցին և հետո դանակներով մորդեցին բոլորին, դիակները լեցրին մի փոքրիկ փոսի մեջ ու գնացին, վազեցինք գյուղ լուր տվինք, եկան ստուգեցին, որ շատ գազանաբարո խժդժություններով սպաննել են այս մարդոց, դեռ մինչև հիմա չպարզվել նրանց ո՞վ լինելը, ոմանց կարծիքով թոտորակցի Սիմոնյան Մկրտիչն էր:

Վերջապես իրար հետևից տեղահանեցին բոլոր գյուղերը, երկրորդը մեր գյուղը, դիվային մեծ ծրագիրը սկսավ արմատապես իրագործվել տեղահանությունը: Եկան թուրք ոստիկանները Հաֆըզի գլխավորությամբ ամեն տուն իրավունք ուներ միայն մի սայլ տանել իր հետ: Սկսավ լաց ու կոծ, ճիչ – աղաղակ խառնվեցին միմյանց: Ոստիկանապետը աչքը դրել էր Սարգիս Սարգսյանի աղջկա՝ Զարուհի

Սարգսյանի վրա, Զարուհին լաց էր լինում, գոռում գոչում էր, ընտանիքի մյուս անդամները, փող էին խոստանում, բռնի զոռով աղջկանը քաշեցին ու տարան ոտերը ձեռները կապած, այնքան ծեծեցին որ ուշքը գնաց և գցեցին մի մութ նկուղ մինչև որ Արիզուի կամքով գնալ բայց ամեն մի ջանք իզուր էր նա որոշել էր մեռնել իրայինների հետ քան գնա հօր դահճին կին դառնա: Զարուհին որը ինձ հետ ապրել էր մեր սարերում, ամառային ամիսներին համարյա քրօջս անբաժան ընկերուհին էր, ես շատ եմ սիրում նրան և լաց էի լինում: Վերջին անգամ տեսա կիսամեռ գոյնը գցած քաշեցին տարին – Ոսկյան Նորպանի Սենցիր ես որպես փոքր կնանոց խորհուրդով հետևից գնացի որ լուր բերեմ: Բարձրացրին սենյակը մերկացրին աղջկան, ու 7-8 ածդահա ոստիկաններ հերթով իրենց սեռային կրքին հագուրդ տվեն: Խեղճ աղջիկը ճչում էր, գոռում էր, հոնդյուններ էր արձակում ոչ մի խեղճ, ոչ մի մարդկային զգացմունք չէր երևում այս մարդկային կերպարանքով Գաչանեռ մոտ, կիսամեռ բերին հասցրին գյուղի մոտ մեր կարավանին: Մի օր հետո մահացավ կրած տանջանքների ազդեցության տակ և թաղելու ոչ մարդ կար և ոչ էլ ժամանակ, մի փոսի մեջ դրին և մի քիչ հող ձեռներով փայտերով վրա տվին դեռ հօրը ոսկորները չէին փտտած աղջկա հետ խառնեցին և թաղեցին, հօրը սպաննել էին մարմնի անդամները կտրատելով, ամեն կեսը մի անգամ և 12 ժամից հազիվ մահացել էր անտանելի տանջանքներից հետո ինչպես ասել ենք անցյալում: Մի օր գյուղի մոտ մնալուց հետո կարավանը ճամբա հանեցին դեպի Սեբաստիա, խառնելով ուրիշ գյուղերից եկող կարավանների հետ:

Եվ մեր գյուղի տեսարանը կամաց կամաց չքացավ մեր տեսողությունից:

Հայրս չգիտեմ որտեղ էր, գնացել էր բանակ և բանակում աշխատելիս է եղել որպես քարտուղար հրամանատարի մոտ: Հրամանատարը նրան շատ է հավանում և պահում իր մոտ: Հին հրամանատարը գնացել է, եկել է մի ուրիշը: Որտեղից որտեղ բերին հասցրին մեր կարավանին, դրամ պոկելու հույսով ես եզները արածացնում էի հանկարծ տեսա մի ուրիշ մարդի հետ թևերը կապած բերին, ես վազեցի մոտիկից տեսնելու, ոստիկանները մի քանի ճիպոտ հասցրին մարմնիս և լաց եղա, նույնը հօրս երբ մի կերպ ուրախացավ որ մեր գյուղի կարավանը այնտեղ էր և գտել էր: Բերին կարավանի մոտ ծառի տակ նստացրին, կարավանից ինչպես որ պատահել էր երկու մարդ և չորս հինգ պատանի գտան չոկեցին տարան նրանց մոտ ոստիկանների գլխավորն էր, Առնավուտ Մեքցեր Շիւքրո: Մայրս փող տարավ վերցրին և խոստացան, որ հօրս ազատեն մենք էլ հեռվից հեռու հետևում էինք հօրս, մանավանդ, որ ես շատ էի սիրում նրան, մի խոնարհ խելոք համեստ մարդ էր: Երեկոյան դեմ տեսա, կրակի մոտ Կյոտեց Ասատրյանին նստացրին ոտերը բարձրացրին ու սկսան փայտի հարվածներ տալ հետո շիկացած երկաթով վառեցին ոտերը, մարդը տնքում էր հեվում, քրտինքների մեջ կորած, աղաղակում էր, բերանը հող էին լեցնում: Դանակոծում էին փորից, կոնակից, որտեղից որ պատահում էր, փայտերով բիրետով գլուխը ջախջախեցին և քաշեցին մի կողմ, ոստիկանապետը մի հրազեն դատարկեց թիկնեղ և ուժեղ մարդը, գալարվում էր օձի նման և ճիչ էր արձակում, էլի սկսան խփել մինչև որ անշարժացավ, իսկ մեզ երեխաներս հավաքեցին շուրջպար բռնել տվին շուրջը: Հետո մի պատանու Եսրաստ գյուղից հեռու նստացրին ու ամեն մեկը նշան էին բռնում դեպի պատանին չէր կպչում գնդակը, մայրը մեկ վազում էր մեկ ոստիկանի թևը բռնում, աղաչում փող տալիս, մեկ մյուսին, տղան գոռում գոչում լաց էր լինում, մենք էլ դողահար նայում էինք այս տեսարանին, հանկարծ մի գնդակ դպավ նրան սկսավ թավալագլոր տղան ընկնել ու բարձրանալ ծիծաղելով քաշ տվին բերին ածեցին կրակը տղան սկսավ վառվել զրկվել մի սարսափելի շարժուձևեր էր անում մինչև հոգին ավանդեց: Այսպես հերթով, առաջ քաշեցին ներսի մի փոքրիկ խցիկից մի ուրիշ 60 տարեկան մարդ. պետը հրամայեց ոչ մի դանակ զենք չգործածեք սրա վրա: Վրա պրծավ խոսքան ամբոխը, թեվերը զրկեցին, գլուխը քաշեցին, դես դեն քթի տակից մի կեռ անցկացրին քաշեցին, աչքերը փայտերով պայթեցրին, քարերով գլխին մեջքին հարվածներ էին տալիս, մարդը դիմադրում էր 10 հոգու ուժին բայց ամեն անգամ թավալագլոր ընկնում էր գետին: Հետո դուրս բերին նիհար դեղնած մարդ, ոտիցը կախեցին ծառից, թևերը հետևը կապեցին, և սկսան շիկացած փայտերով վառել աչքերը քիթը բերանը ծակոտում էին մարմինը, մազերը մեկ մեկ պոկեցին ականջները կտրեցին փորը բաց արին աղիքները դուրս թափեցին մորթված ոչխարի նման:

Երբ ձանձրացան բոլորիս դուրս բերին թիկը տվին ամեն մի 4-5 հոգուն մի գնդակ պարպեցին և սկսան քարերով փայտերով սպանել և տանել մոտակա Գերաիմ նետել: Ամեն ինչ վերջանալուց հետո: Նայեցին մեզ և մի ակնթարթում հարձակվեցին մեզ երեխաներիս վրա սպանեցին մի քանի-

սին քարով, փայտով, մուրճով, մանգալով ինչ որ անցնում էր նրանց ձեռքը բարեբաղդաբար մեծ եղբայրս ինձ հետը քաշեց մացառների մեջ և մենք փախանք խառնվեցինք կնանոց խմբին սայլերի մոտ: Հօրս վիճակը անհայտ էր մեզ չկարողացանք իմանալ թե ի՞նչ եղավ մինչև լույս մտատանջումի մեջ էինք, լալիս էր մայրս անդադար մենք էլ հետը 10 ոսկի տվինք մի հատ շատ արժեքավոր ժամացույց այս բոլորից հետո մօրս ասել էր, որ գնդակով կսպանենք մյուսների նման չենք չարչարեր, բայց մի գտադակից ոչ ավելի, թրքական ոստիկանների զենքերը շատ անդեպի էին մարդ չէին սպանում այլ երկար չարչարել էին տալիս: Ես թեև երեխա, բայց շատ ուրախացա, որ հօրս նորից բերել էին մեզ մոտ և առանց չարչարանքի պետք է սպաննեն, որովհետև այդ հրեշային աստիճանական չարչարանքները, որոնց ականատեսը լինում էի ես շատ քստմնալի և անլուր ոճիրներ էին, քաղաքակիրթ մարդու մոտ կենդանին անգամ այդպիսի չարչարանքների չէր ենթարկվեր: Այս մտքերի մեջ քունս տարել էր կես գիշերին քնացա: Առավոտ շուտ մեզ արթնացրին, սայլերը լծել տվին և դեպի սեփ ճամբա հանեցին հեռու ոլորտներով: Երկրորդ թե երրորդ օրը հասանք Սեբաստիայից 8 կիլոմետր հարավ Պառնալի ձոր ասված տեղը: Սեբաստիայից բերին մի կարավան և խառնեցին մեզ մասնավորապես հարուստ ընտանիքներից, նրանց մարդիկը բանտից թե սպանդանոցից հանել բերել էին այդտեղ մի որոշ նպատակով: Իջեվանեցինք մի ցած տեղ երկու կողմի վրա խորունկ կիրճ ունեցող ձորերով և Ալիս գետի վրա կար Պունազի մեծ կամուրջը հին պատմական մեծ անցյալ ունեցող կամուրջը: Ճանապարհի հոգնածությունից վախի սարսափից սայլի

տակ քնեցն մի աղմուկ, ճիչ մոտիցս քնիցս վեր ցատկեցի տեսա քրօջս քարշ են տալիս բռնի դեպի ոստիկանները, մի երկուսը եկան և ինձ գրկեցին մեջքիցս և քարշ տվին ոստիկանների մոտ նույնպես և խփեցին ինձ գետնին, ես ինձ գտա իմ հասակակիցների մեջ, դեռ բերում էին նորեր մեր դիմացը գլխակոր նստեր էին մեծ մարդիկ անխոս, դժգույն, և անշարժ: Ոստիկանները մի վրանի մեջից հրամաններ ստանում էին, մայրս, փոքր քույրերս և եղբայրներս եկան, մայրս ուզում էր ոստիկանապետ Խալիս բեգին տեսնի բայց, որ մեկիս համար քրո՞ջս մե՞զ թե հօրս համար, խեղճ մայր գյուղի սարսափելի չարչարանքներից ուժասպառ դալուկ հազիվ հող էր իրանը պահում, հանկարծ ոստիկանները հրեցին գետին գցեցին դեռ շուտ է գնա հետո կգաս, հրամանատարը քնել է ասին: Խեղճ մայրս գլխին էր տալիս ո՞ր մեկի ցավով տանջվեմ, տեր աստված, ես մեռնեմ ազատվեմ այս ցավիցը գոռում էր, բիրտ ոստիկաններ դու մեզ անիծում ես ասելով, մի քանի ճիպոտ խփեցին գլխին, մարմնին և քարշ տվին հետ դեպի սայլերի եղած տեղը: Մայրեր իրենց հորդը կորցրած կովի բառաչի նման գոռում էին լալիս դեպ մեզ էին գալիս, բայց ամեն անգամեն էլ ծեծով բերելով քշում էին հետ: Բերում էին դեռատի աղջիկներին կիսամեռ ուշքը գնացած խփում էին գետնին հռհռում ծիծաղում, մի բիրտ ոստիկան մի 14 տարեկան աղջկան վերցրեց ու տարավ վրանը անշունչ դիակը և 15-20 րոպե հետո դուրս եկավ հեռվից մայրս փոքրիկ քույրերս եղբայրներս լալիս էին և մեզ նայում, աչքս չորս կողմս էր լսել էի հօրս նորից բերել են բայց իզուր չկար չէր երևում ոչ մի տեղ: Այս բոլոր ջարդերին ղեկավարում էր

Խալիս բեգը Մուսամմերի կողմից Սեբաստիայից ուղարկված:

Չեթեապետ Քյություկի տղան, Հյուսեին և Ջառացի Մահիր Տ. Սահակ վարդապետի սպանիչները – արյան կզակ թուրք չեթեների գլուխ անցած իր հետ վերցրած արյունշռուշտ ժանդարմներ, գյուղերից զենքեր հավաքելու համար եկան մեր գյուղը: Անօրինակ և աննախնդաց, անլուր խժդժություններ, պատիժներու ամենավայրագը, զոր երբեք մարդ կրնա խելաբերել, գործ կտրուեցեն անտեր խեղճ գյուղացիների վրա, պատիժներ որոնք ի լուր մարդուս ոտից ներքև հողեր կփախչին: Սոսկալի դանակոծություններ ծեծի տակ շատեր կմեռնեն, շատերու մարմինը կասկապուտ կսեվանա, միսերը կփտտեն-կթափեն, ոտքերու պայտ կզարեն, քահանաներու ամենախիստ պատիժներ, նախատինք մորուքանզիք կփետեն, աքցանով մսերնին բզիկբզիկ կնեն: Ատամներնին կքաշեն, քիթ, ականջ, շրթունք կկտրեն շիկացած երկաթով կտաղեն մարմնի մասերը, պղինձ թասով գլուխ, մարմին կդաղեն, խարազանով ժամերով կխարանեն կցցեն սրածայր ցցերի վրա: Կիներու, հարսներու շապիկների մեջ կատուկ գցեն, արգանդեն ներս փայտ երկաթ կխրեն: Հղի կնոջ երեխան ուժով դուրս կքաշեն, կանանց, աղջկա տատիկ կբռնաբարեն, բոլորից հետո գյուղի երիտասարդները պիրկ-պիրկ իրար կապած ձորերի մեջ շատեր կսպաննեն գազանաբար: Ալայ-պեկ, Ալի Շերիֆ-Խորսանացի և Կավռա գյուղերի երիտասարդները, այրերը բոլորը իրար կապած քաղաք (Սեբաստիա) բերելու անունով կհանեն, կբերեն Պունազի ձորը, հոն խժդժորեն կսպաննեն, կմանրեն մարմինները, ապա դահիճները կվերադառնան գյուղ, կանանց կասեն, որ սայլերը լծեն գնան ենթան և բերեն սպանյալների դիակները, մինչ իրենք նստած, հանգիստ սրտով, արյունոտ ձեռքերով կուտեն պատրաստված լիառատ սեղանը: Կնանիք գնում են Պունազի ձորը, չեն կարողանում որոշել թե սպանյալներից ո՞րն է իրենց ամուսինները, զավակները, եղբայրները – այնքան ահռելիորեն հոշոտված, բզբքտրված, ջարդված անճանաչելի դարձված: Երևակցեք ողբ ու կոծը, խոր թախիծը: Գոչ-Հիսար բանտարկվածներից քաղաք բերելու պատրվակով սպանում էին Կավուցի – փոսեր կոչված վայրերը: Գիշերները 50-100-ական իրար կապած տանում էին գյուղի վերև սպանում էին շորերը բերում ծախում էին քաղաքի շուկայում: Այնպես, որ տեղահան եղած ժամանակ, ոչ մեկ 8-10 տարեկանից վեր արու մարդ չկար: Բոլորին սպանել էին բացի մի քանի ծերերից և ծպտվածներից, նրանց էլ ճանապարհին չոկում սպանում էին: Առաջին չարչարանքների և ջարդերի մկրտությունը աքսոր ճանապարհին Ալիս գետի վրա Պունազի կամուրջի մոտ էր դրանից հետո մինչև Հասան Չելեցի պատահած դեպքերը զանց են անում և սովորական եմ համարում կին բռնաբարելը, մարդ սպանելը, իրեր և փողեր խլելը, ծարավը և սովածությունը: Մեր գյուղից 10 օր հետո հասանք այլ դժոխք կոչեցյալ վայր, որտեղ իջեվանել էին մեզանից առաջ Սեբաստիայի ջարդարարները իրենց կիսատ թողած գործը լրացնելու համար: Դրանցից են:

1 Էմիր փաշայի տղան Համիտ Պեկը.

2 Էմին-Քեհեա-զատե Խալիս Պեկ.

3 Քյություկ-Մեմմետի տղա Հյուսեյին.

4 Մուամմերի թիկնապահը Գոմիսեր Մահմուտ.

5 Թյությունճի հաճի խալիլ.

6 Էօրյուկճյուլի Իպրահիմ:

Մինչև այստեղ սպանություններ կատարվում էին 10-20-ով և դիակները 4-5 հոգի կսպանեին, միայն այդ մարդիկ, աչքի ընկնող մարդիկ: Հասան Չելեցին ընտրելու էին, որպես ջարդի վայր նրա համար, որ այստեղ կային անմատչելի լեռներ, ադամորդու ոտք չդրած խորունկ ձորեր, երկրաշարժե հրաբուխե բացված անհատակ անդունդներ, մթին աչքեր, մեծ գետերու խորխորատներ, գահավեժ ժայռեր, սառնարաններ, ճախնուտներ, լճակներ, մթին անտառներ: Այս վայրերի վրա խրախճանքներ էին սարքում գիշակեր թռչուններ, սև ագռավներ, զարագուշակ բուվեր, անապատի անֆղներ, բարձրադիր ժայռերի արծիվներ, վայրի գազաններ, շուներ, շնագայլեր, գերեզմանափոր բորենիներ, ամենքը ամենքը, հղփացան սրտքղեցան հայու արյուն և նետած դիակներ ուտելուց տափլիզելուց, միս հոլոտելուց, ոսկորներն փրթելուց:

Շատ անգամ նույնը այստեղ սպանդանոցի մերձակա գյուղի վայրագ խուժանին գործադրել կտային ջարդը: «Եկե՛ք, ձեր հայրերը, ձեր զավակները պատերազմի մեջ սպանողները գերի բերել ենք, եկե՛ք դուք ալ զանոնք ջարդեցե՛ք, ձեր վրեժը լուծեցե՛ք, սրտերնիդ ոչ աղեցուցեք»: Եվ ջարդի գործադրությանը հսկում էին ժանդարմներ, տեղվույն կառավարիչը, փոլիս գոմիսերը, իթթիհատականեն ներկայացուցիչներ, գյուղապետներ և այլն:

Սպանությունները կատարվում էին խիստ մարդախաղող եղանակով: Մանգազները նաճափներով, մահակով, կացինով, սրածայր ձողերով, սղոցով, քարերով, փայտերով:

Սպանվողը շատ բաղդավոր էր և բարեբաղդ պետք է համարեր իրան, որ գնդակով կամ սրով սպանեցին: Շատեր աղաչում էին մեկ անգամեն կամ գնդակով սպանվելու համար: Բայց գնդակն անգամ խնայում են մեկ գնդակիս երկու ոսկի են ուզում: Ժամերով չարչարում են խեղճ զոհը տուայտում էր, տապլտկում էր, չարչարվում էր արյան ճապաղների մեջ ահռելի հռնդյուններ էր ուլտումներ էր, գալատումներ էր անում մինչև հոգին ավանդելը:

Հասան Չելեցի արտակարգ իրար անցում սկսավ Իջեվանին մեջ, լաց, կոծ, պոսչըտուք, սուր ճչեր, քյուրտ վայրագ չեթաներ, ծուռ թրերը շողացնելով Իջեվանը տակ ու վրա են անում, բերեր, խարազաններ բարձրանում և իջնում են ամեն կողմ, կնանիք խելահեղ փռում են գետնին ամեն կողմ խուզարկություն, կանանց, աղջիկների լաչակները քաշում բզկտում են, ուշի ուշով նայում, քննում են երեկ մարդ է թե կին, պատանի թե մանուկ. և այսպես հավաքեցին պատանի ծեր, մանուկ տարին բանտ լեցուցին, երկար չարչարեցին մեծահասակներին – գիշերը բանտից հանեցին էրկ, երկու մեկզմեկու կապեցին թևերից, զուաններով պինդ ես, փոքրերից թույլ կապով տարին լերան հետև մի խորունկ ձորի մոտ: Երկուական կապը քակում և կանգնեցնում էին քարի գլխին մի նաճախով կամ կացնով զոհի վզին ականջին գլխին տալիս էին, բութ կողմովը ոսկորները ջարդում ու ձորն ի վար էին շպրտում: Ոչ մի աղմուկ ոչ մի շշուկ:

Բանտում եղած ժամանակ երկու մասի բաժանեցին երկու խաների մեջ բանտարկեցին դռները սվինավոր պահակներ դրին գիշերվա ժամը 12ն էր, լուսնակ գիշեր էր. խանին դուրսը քյուրտեր ոմանց ձեռքը նաճախ ոմանց ձեռքը

սաթոր, կացին խմբերով կանձնեն դեպի լեռների կողմը: Ժամը երկուսին երկայն զռաններ բերին, դուռը կիսաբաց արին, մեզ երկուական դուրս հանեցին կիսաբաց դռնից, թե թևի ձեռը կապում են մեծ եղբօրս հետ մի քանի տղաքներով ամենեն վերջը մեզ կապեցին ինձ էլ եղբօրս հետ կապեցին: Երբ լրացավ այս գործողությունը մեզ տարին մի լեռան հետև խորունկ ձորի գլխին: Այդ տեղ մեզ հետ եղած ժանդարմներ երկու զենք արձակեցին, այս նշանի վրա քյուրտերը ամեն կողմից խուժեցին դեպ մեզ նաճախները ձեռներին, չորս կողմերը պաշարեցին, սկսան երկերկուս արձակել կապից, մերկացնել բոլորին, շորերի մեջ դրամ էին փնտռում, և ասում էին փող տվեք ով երկու ոսկի տա, գնդակով կսպանենք: Բակուածները սպանում և ձգում էին առաջի խորը ձորը ամբողջ դիակով լեցվեր էր, նեխած դիակի հոտը ամեն կողմ տարածվում էր լեռնային չինչ օդի մեջ:

Նախորդ օրվա վիրավորների հոնդյունները դեռ լսվում էին: Կապվածները հուսահատական աղաղակներ էին արձակում լեռները թնդում էին նրա հառաջից լացից կոծից, ոմանք աղոթքներ էին մրմնջում երեսները խաղակնքում, դեպ երկինք աստված աղաղակում էին: Իսկ դահիճները կատաղաբար ջարդում էին և գլորում դեպ ցած ձորը երբ մեզ եկավ հերթը դահիճների գլխավորը նայեց մեզ: Հրամայեց թողեք այս փոքրերը սրանց հարկավոր է իսլամացնել այդպես է Ալլահի հրամանը և մենք թմրածությունից արթնացած վեր կացանք ու հետեվեցինք մեզ առաջնորդող քրտին: Երբ հասան Իջեվան: Նույն պատմությունը նոր իջեվանող կարավանի հետ: Հավաքել էին մի խումբ մարդ ու տղա մի հրապարակ, չորս կողմը շրջապատված քրտեր դաժան ժանդարմներ, թուրեր նաճախներ ձեռներին: Տեսնելով, որ փող զերվում բերին ձեռ պայտեր, գամեր սկսան ոտքերը նալել, ձեռքներին հավատամք էին բռնել տալիս ու մեխում մի կողմից մյուսը: Զոհերի աղիողորմ ճիչերը, աղաղակները, մյուս կողմից կնանիք լաց էին լինում, վայնասուն բարձրացնում: Իսկ զոհերի արյունը գետինը ամբողել ողողել էր թավալում էին դես դեն հևում, հեծկլտում տապլտկում աղիողորմ ճիչեր հանում: Վերջը մեծ քանակությամբ չոր խոտ բերին մի թիթեղ կաղ և թափեցին խոտի վրա զոհերի շուրջը:

Խոտը բռնկվեց, վառվող խոտը զցում էին ոչ սկսած նըստած գլորվող մարդկերանց տղաների վրա կանանչ կարմիր բոցերը լափում էին զոհերը իսկ կնանիք չորս կողմ խելագարված, ոմանք ինքզինքնին գետին կխփեյին, պատառ-պատառ կանեյին կրծքներեն ծեծում էին մազեր էին փետում, երեսները ճանկոտում ոմանց ուշքը գնացած ընկնում էին գետին ձեռներով երեսները ծածկում այս ահռելի տեսարանի առաջ, որը ճշմարիտ դժոխք էր, այն ինչ, որ պատկերացվում էր գրքերի մեջ մարդկանց վախեցնելու համար:

Մյուս կողմից դահիճները բռնադատում էին կանանց երեսները, որ չծածկեն և նայեն իրենց վառվող ամուսիններին, եղբայրներին, զավակներին, ազգականներին և որ բռնած դիվային քրքիչով պարում էին: Մարդկանց յուղի հոտը ամեն կողմ տարածվեց, բոլորը այրվեցին և մոխիր դառան:

Հեքիմ խան. մի ձորի մեջ դիակներ խռնված մեր կարավանից գտան 10-15 տարեկան տղաներ և իրենց ծնողների աչքի առաջ սպանեցին քիչ հեռու ձորակի մեջ գործ էր

դրվում նույն գործիքներ մահակ, կացին, նաճախ, ծուռ թուր, գերանդի քար փայտ և այլն: Այլևս սպանությունը խաղ ու պար էր սրանից հետո:

Հասան պատրիկ –

Սուսուզի եազին կամ Անջրդի դաշտը:

Գըրգկեօզ կամ քառասուն աչք կամուրջի վրա:

Ֆըրնճլար – մեծ հանգրվանը: Այստեղ ծերերը հիվանդները և 3-4 տարեկան երեխաները լքում և գնում են մայրեր: Դեռ կարավանը լրիվ չքաշված շփրուն վիճակ ունին մտահոգ դես դեն ման են գալիս, մայրերնին են փնտրում աչքերնին չորս կողմը հառած նայում են, մայրեր վաղուց թողեր ու գնացել են իրենց երեսները առել ու փախել են, հեռացել են չտեսնելու իրենց հարազատ երեխաների վիճակը: Երբ բազմությունը քաշվում է, երբ չորս կողմերնին դատրկություն է, հրմբանը, լացը, մանկական սրտաճմլիկ վայնասունը բարձրանում է: Սո՛ւր, սո՛ւր ականջ ծակող ճչոցներ, լիաթոք լաց, սրտապատառ: Գոռում են կանչում են ճչում են, անսիրտ մայրեր ո՞ւր եք գնում, ինչո՞ւ եք թողել: Աղաղակներ շրջակայքը կարձագանգեն: Մայրեր այս աղիողորմ ճիչերը չլսելու համար գլուխները երկու ձեռքերի մեջ առաջ, ականջներ խցած դեմքերին ծածկած փախչում են կայենի փախուստովը: Խեղճ մանկիկներ փորձ են անում ոտի են կանգնում վազում են դողդողջուն ու վար ընկնում: Ինքզենքնին գետիններ են զցում հողերու մեջ տապլտկում պոռում են լեզատտառ մա՛, մամա՛, ապպա՛... Կարավանը հեռացել է շատ հեռո՛ւն, հորիզոնի վրա սև գիծ, փոշիների ամպեր մրրկավոր... Լքյալ մանուկները հարյուրավոր շարունակում են լացը՝ մանկական եղերերգու եղանակով, որի

առջև քարերն անգամ կփղձկեյին: Հետհետե ձայներնին մարում է, կերկերում է, կրծքերնին խեղդվում է, սրտերնին ելած շրջերնին հապած կտրած հեկեկում են լուռ ժամերով լեզունին պապակած բերանին չորացած ծարավից նայող վերցնող չկա մոտեցող չկա, խելագարված ուշքերնին անցած ընկնում են բերանիվոր այրող կեզիչ արևի տակ, տրոփում են հանկարծ, խռովքից արթնանում են վեր են կանգնում մի նայվածք են զցում սարսափով չորս կողմերնին դատրկության, իրենց մե հեռու, անտարբեր անկարեկիր, անծանոթ դեմքեր միայն... Չկա մոտեցող չկա ջուր տվող չկա հաց տվող լեզունին չորցեր քեմքերնին փակուեր բերաննին բաց է մնացեր, նորից վայնասուն են բարձրացնում արցունք չկա չորացեր է լացուց, վրա է հասնում գիշերը մնում են բաց դաշտի վրա անտեր ու լքված. աղիողորմ ձայնով, ճչում, հեկեկում խուլ տնքոցներ են հանում իրենց մօրն են կանչում կամ քրօջը: Դիակները նեխել է. մին էլ մի կողմ քաշված քրերից հողից տուն է շինում խե՛ղճ տղա: Նայում եմ ես անտարբեր ու գնում:

Ռամազանի օրերն են քննիչ է գալիս, կին տղա հավաքեցին ճանապարհների դիակները հավաքեցին մի խորը փոս փորել տվին դիակները ժողվում ու թափում էին այս փոսը, վերջի վերջո եկան քրտեր ժանդարմների ղեկավարությամբ այս երեխաները հավաքեցին ողջ ողջ գցեցին այդ ընդարձակ փոսի մեջ. զգալով, որ իրենց ողջ ողջ պետք է թաղեն, ահ ու սարսափի մատնված մի այնպիսի ճիչ և աղաղակ բարձրացրին, մի լաց ու վայնասում, որից երկինք գետին կարծես կդողար: Երկու վայրկյան հետո հողը վրա տվին և ձայները մարեցան ամեն ինչ վերջացավ:

Երեխաների խմբերը սարերի մեջ բարձր ծառերի ստվերանքում մի առատաջուր աղբյուրի մոտ մարգագետնի վրա ծառերի հովանքիի տակ 100-200ի չափ լքյալ երկսեռ երեխաներ վեց ամսու-մեկ տարեկանից մինչև 3-4 տարեկան, որոնց քանակը ավելանում է ամեն օր զգայացունց և ընդվզող թշվառություն, խեղճություն խելագարվելու աստիճան, լեարդդ բզիկ բզիկ կլինի և աղիքները կգալարվեն, ընտանեկան տաքուկ հարկից և ծնողական տոգորող խնամքից զրկված մանր մանուկներ, տղեկներ Ալիտնքից կտրված, թողնված անզոր, անճար: Իրենք կարճես զգում են իրենց վիճակը, գիտակցությունը ունեն ամեն ինչի և համակերպեր են այդ սև դրությանը: Այստեղ ոչ մայր փնտրող կա, ոչ յուրայիններ, քեն են արել աշխարհին, ուղղության անգամ չեն դարձնում իրենց շուրջը: Մանկական զվարդությունին կորցրել են, թախիծը կաթում է նրանց դեմքերից: Բայց կարծես սեգ վեհերոտ տեսք են առել, արհամարհոտ ու խրոխտ արտահայտություն ունեն: Մեկ մեկ հառաչում են սրտի խորից – լռին ազդու բողոք է մարդկության հանդեպ: Կան կայտառ սիրուն կարմրավուն երեխաներ դեռ նործիներ են, կան նիհար, տժգույն, վտիտ մեծ մասամբ հալեր ու մալվեր են, կմախք դառել, միայն ոսկորները մնացել է մի պարկ կողու մեջ, աշնան տերների պես թառամել ու զորցեր են: Ոչ ոք ուշադրություն չդարձնում նրանց, մեկը ճագարի պես վարունգ է կրծում մյուսը մի կտոր հաց է ուտում: Շատեր նվաղան պառկեր են գետնին տնքում են ցավագին ոմանք հոգեվարքի մեջ են զառմում են, քանիներ մեռել են: